

Արցախի Մէջ Կը Շարունակուի Զգտեալ Վիճակը

Գործադուլ Ստեփանակերտի Մէջ, Յոյց Երեւանի Մէջ

Սորհրդային բանակի սլաշտօնաթերթ «Քրասնայա Զվեզտա»-ի հետ ունեցած հարցազրոյցին մէջ, Ղարաբաղի Մարզի կառավարման յատուկ յանձնաժողովի նախագահ Արքատի Վոլսքի ըսած է թէ շրջանի երկու գլխաւոր ազգութիւններուն - հայ եւ ազերի - յարաբերութիւնները դժբախտաբար կը գտնուին ձգտեալ վիճակի մէջ, աւելցնելով թէ նախկին կիրքերը չեն հանդարտած տակաւին եւ կրակը չէ յանգած:

Ան ընդգծած է թէ տասնեակներով եւ հարիւր-

ներով պատասխանատուներ, որոնք ամբաստանուած էին երկու ազգութիւններու միջեւ վէճեր հրահրելու յանցանքով, իրենց սլաշտօններէն ազատ արձակուած եւ նոյնիսկ հեռացուած են Համայնավար կուսակցութեան շարքերէն:

Վոլսքի շեշտած է թէ ինք պատրանքներ չի սնուցաներ որ ազերիներու եւ հայերու միջեւ վստահութեան վերահաստատումը դիւրին գործ մը ըլլայ, այլ հաստատած է անոր շատ բարդ ըլլալը:

Տնտեսական եւ ընկերային մարզերէ ներս կացութիւնը

նոյնպէս շատ դժուար է Ղարաբաղի մարզին մէջ: Գործադուլներու հետեւանքով տնտեսական կացութիւնը այնպիսի դժուարութիւններու առջեւ կը գտնուէր, որ նոյնիսկ շատ մօտեցած էր տնտեսական ամբողջական փլուզումի սեմին, որմէ կարելի եղաւ խուսափիլ բարերախտաբար:

Արցախցիները Մարտ 6էն ի վեր գործադուլ են հռչակած, առ ի բողոք իրենց արտադրութիւնը Ատրախէյճանի - եւ ոչ թէ Հայաստանի - ծախելու ստիպողութեան: Գործադու-

(Շար.ը տեւակել Յրդ էջ)

ԱՐՑԱԽ

(Շար. առաջին էջին)

Կը ամբողջական չէ, սակայն
չատ մը հաստատութիւններ
չեն աշխատիր:

Բանթողները տասը սլա-
հանջներ ներկայացուցած
են. կը սլահանջուի Ատրպէյ-
ճանի հետ ամէն յարաբերու-
թեան խզում, Մարդին Հա-
յաստանին միացում, Ղարա-
բաղի Կոմիտէի անդամնե-
րուն ազատ արձակում եւ-
այլն:

Երեւանի մէջ «բազմահա-
զար անձեր» ցոյց մը կա-
տարած են Չորեքշաբթի, 8
Մարտին, առանց որ բանա-
կը միջամտէ: Կրակմարի
հաստատումէն ի վեր այս
երկրորդ թոյլատրուած
ցոյցն է: